

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների
բավարարվածության հարցման արդյունքների (2015-16 ուստարի, առկա)
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացումները պարտադիր պահանջ են դարձրել կառավարման մեջ հետադարձ կապի ապահովումը: Այն, ի թիվս մի շարք մեթոդների, իրականացվում է հասարակական կարծիքի պարբերական հարցումների օգնությամբ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ղեկավարությունը իրապես կարևորում է այդ հնարավորությունը և նման տեղեկույթը ձգտում է օգտագործել ի շահ կրթօջախի: Դրա ապացույցն են Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից վերջին 4-5 տարիներին մասնաճյուղում անցկացված բազմաթիվ հարցումները, նրա արդյունքների մանրամասն քննարկումն ու առօրյա աշխատանքում կիրառումը: Մասնավորապես 2011-12 ուստարվանից սկսած՝ մասնաճյուղում անց են կացվել բուհում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներ: Արտաքին ու ներքին շահակիցների, բոլոր կուրսերի ուսանողների շրջանում անցկացված հարցումների, ուսումնասիրությունների կողքին նման հետազոտության արդյունքները օժանդակում են մասնագիտական կրթության ուսումնական պլանների ճշգրտմանը, դասավանդման մեթոդների կատարելագործմանը, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների զարգացմանը, բուհի կառավարման բազմաթիվ խնդիրների լուծմանը:

Մասնաճյուղում շրջանավարտների հարցումն առանձնակի է կարևորվում, քանզի համոզվածություն կա, որ այստեղ պատասխաններն ավելի համարժեք են լինելու, իսկ հետևությունները՝ գիտականորեն ավելի հիմնավոր: Ուսանողի հոգեբանական այն մտահոգությունը, թե սեփական կարծիքն ու գնահատականն անկեղծ արտահայտելը կարող է «վնասել» իր ուսումնական շահերին, շրջանավարտների դեպքում գրեթե գոյություն չունի: Կա այն համոզմունքը, որ նրանք արդեն «չեն վախենում» և համեմատաբար ավելի ազատորեն են արտահայտելու իրենց կարծիքներն ու գնահատականները:

Այժմ ներկայացնենք 2015-2016 ուստարվա առկա ուսուցման շրջանավարտների շրջանում անցկացված հարցման արդյունքները և այդ արդյունքների ու 2011-12, 2013-14 ուս. տարիների առկա ուսուցման շրջանավարտների մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության հարցման արդյունքների համեմատական վերլուծությունը:

Հարցումները եղել են համատարած, առանձին բացառություններով, դրանց մասնակցել են տվյալ ուսումնական տարվա բոլոր շրջանավարտները: Ներկայացնենք շրջանավարտների և հարցմանը մասնակցած շրջանավարտների քանակն ըստ մասնագիտությունների.

Ուս. ձևը	Ընդամենը	Անգլ.	Գ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	ՖրԼ
առկա	186/178	24/24	31/29	13/12	25/23	8/8	23/21	18/18	35/34	9/9

Հարցման արդյունքները և նախորդ ուս.տարիների հետ նրանց համեմատական վերլուծությունները ներկայացնենք ըստ հարցաթերթում ներառված բաժինների:

1. Շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից

Հիմնարար հարցադրումներից մեկը եղել է այն, թե մասնաճյուղը որքանով է արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը, և շրջանավարտները որքանով են բավարարված կրթական ծրագրի բովանդակությունից և ուսուցման մեթոդաբանությունից: Այս բաժինն ընդգրկել է 8 հարցեր, որոնք վերաբերում են շրջանավարտների ձեռք բերած գիտելիքներին, մասնագիտական կարողություններին, գործնական հմտություններին, օտար լեզուների իմացությանը, մատուցված դասընթացների, պրակտիկաների օգտակարությանը, մասնաճյուղում գիտելիքների գնահատումից նրանց բավարարվածության մակարդակին:

ա) Բավարարվածությունը ձեռք բերած գիտելիքներից, հմտություններից, կարողություններից և մատուցվող դասընթացների օգտակարությունից

Որպես սոցիոլոգիական արժևորում փաստենք, որ 5-բալանի սանդղակով ուսումնասիրվող երևույթների գնահատականը՝ 4.33, 4.46, համարվում են բարձր, իսկ՝ 4,54-ը՝ շատ բարձր գնահատականներ:

Ի	Ուսումնասիրությունը ԵՊՀ ԲՄ-ում որքանով է.	Միջ. գն.	Անգլ.	Գ/Ա	ԳՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Մերվ	Տնտ	ՖրԼ
2.1	նպաստել մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը	4,46	4,00	4,86	4,55	4,68	4,50	4,14	4,44	4,50	4,33
2.2	տալիս տեսական գիտելիքներ	4,54	4,25	4,93	4,60	4,50	4,25	4,38	4,50	4,70	4,33
2.3	տալիս գործնական հմտություններ	4,33	4,00	4,86	4,60	4,62	4,63	4,00	4,28	4,10	4,00

Ընդհանուր առմամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում բոլոր մասնագիտությունների գծով շրջանավարտները բարձր և շատ բարձր են գնահատել թե՛ ձեռքբերված տեսագործական գիտելիքները, և թե՛ մասնագիտական կարողությունները: Հիշեցնենք, որ բերված տվյալներն ու վերլուծությունները, հարցման մեջ վիճակագրորեն տարբերակված արժեք են ներկայացնում, եթե տարբերությունը 0,2 բալից մեծ է:


Երբ մանրամասնորեն դիտարկում ենք արդյունքներն ըստ մասնագիտության, տեսնում ենք, որ մասնագիտությունների մի մասի շրջանավարտների հասարակական գիտակցության մեջ նշված որակները դրսևորվում են շատ բարձր, իսկ մյուսներում՝ բարձր/օրինակ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» (մասնագիտական կարողությունների ձեռքբերում՝ 4.00, գործնական հմտություններ՝ 4.00), Պատմություն՝ (գործնական հմտություններ՝ 4.00), ֆրանսերեն լեզու՝ (գործնական հմտություններ՝ 4.00), Տնտեսագիտություն (գործնական հմտություններ՝ 4.10) և այլն: Այսինքն, որպես անառարկելի վիճակագրական փաստ, 5-միավորանոց սանդղակում 4-ից բարձր գնահատականների միջոցով շրջանավարտների գիտակցության մեջ մի կողմից հավաստվում է ուսումնական գործընթացի իրականացման հարցում մասնաճյուղի բարձր որակավորումն ու արդյունավետ գործունեությունը: Մյուս կողմից՝ հարցման արդյունքները փաստում են, որ մասնագիտական անհրաժեշտ որակների ապահովման հարցում, «լավի» և «գերազանցի» միջև մասնաճյուղի առանձին ֆակուլտետներն ու ամբիոնները որոշակի անելիքներ ունեն:

Ինչպես ճանաչողական, այնպես էլ գործնական տեսանկյունից կարևոր է համեմատել տարբեր տարիների շրջանավարտների կարծիքները:

Տարբեր տարիների տվյալները վկայում են, որ բոլոր մասնագիտությունների գծով այդ գնահատականները բարձր են և՛ շատ բարձր: Փաստ, որը հետազոտողներին բարոյապես թույլ չի տալիս որևէ մասնագիտություն ընդգծել և դարձնել քննադատության թիրախ: Տեսնում ենք, որ տարբեր որակների գնահատականներում առանձին մասնագիտությունների գծով, հարցման տարիներին առկա են ինչպես որոշակի առաջընթաց, այնպես էլ՝ հետընթաց: Որքան էլ որ դրանք վիճակագրորեն նշանակալից չլինեն, այդուհանդերձ այն պետք է դառնա ուշադրության, ավելի մանրամասն և համակողմանի վերլուծության առարկա: Դա վերաբերվում է հատկապես այն մասնագիտությունների պատասխանատուներին, որտեղ որոշակի հետընթաց է ամրագրվել: Ամենակարևորը, որ նման վերաբերմունքը ըստ ամենայնի խթանվում է մասնաճյուղի ղեկավարության կողմից: Մասնավորաբար, մասնաճյուղում օրախնդիր են ուսումնառության նոր, ուսանողակենտրոն մեթոդների ներդրմանը, դրանց ակտիվ կիրառմանը, ուսանողների կողմից ինքնուրույն աշխատանքների արդյունավետ իրականացմանը նվիրված քննարկումները, արդեն արված որոշակի քայլերը, ինչը, կարծում ենք ուղղակի կամ միջնորդավորված, դրական ազդեցություն է ունենալու նշված հարցերի լուծման գործում:

Այս ամենից սոցիալ-վիճակագրական հետևությունը մեկն է. մասնաճյուղում տեսական գիտելիքների, գործնական հմտությունների և մասնագիտական կարողությունների իրացման հարցում առկա են լուրջ ձեռքբերումներ, ինչի արտահայտությունը շրջանավարտների գնահատականներն են: Միաժամանակ, գնահատականները հուշում են, որ զարգացումների ռեսուրսները սպառված չեն, հատկապես մարտավարական ու ռազմավարական խնդիրների համատեքստում:

Մասնաճյուղում ուսումնառության այդ երեք բաղադրիչներից բավարարվածության միջին գնահատականները հետևյալն են.




h	Հարցի բովանդակությունը /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գն.	Անգլ	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տես	ՖրԼ
2.5	Որքանով էին ընդհանուր առմամբ օգտակար ԵՊՀ ԻՄ-ում մատուցվող դասընթացները	4,51	3,88	4,93	4,82	4,73	4,50	4,38	4,53	4,52	4,22

բ) Բավարարվածությունը օտար լեզուների իմացությունից

Երբ դիտարկում ենք 2015-16 ուստարվա հարցման տվյալները.

h	Հարցի բովանդակությունը /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ.	Գ/Ա	ԳՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Մերվ	Տնտ	ՖրԼ
2.4	Ուսումնառությունը ԵՊՀ ԻՄ-ում որքանով է նպաստել օտար լեզուների իմացությունը	4,20	4,09	4,58	4,36	4,48	4,00	4,24	4,22	3,72	4,33

տեսնում ենք, որ ԵՊՀ ԻՄ-ում ուսումնառության ընթացքում օտար լեզուների իմացությունից բավարարվածությունը բարձր է, սակայն՝ ոչ շատ բարձր: Իսկ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության շրջանավարտների մոտ այն կազմում է 3.72, ինչը միջին գնահատական է: Ինչն է, ըստ հետազոտողների, այստեղ կարևոր: Նախ այն, որ բարձրագույն կրթության ժամանակակից պահանջներին համահունչ, նաև ելնելով սեփական աշխատանքային և կենսական ծրագրերի իրագործման պահանջներից, մասնաճյուղի շրջանավարտներն ավելի մեծ ակնկալիքներ են ունեցել, կապված օտար լեզվի յուրացման հետ: Դա իրապես դրական երևույթ է, և որքան էլ տարօրինակ կարող է հնչել, այստեղ ավելի ցածր գնահատականն ավելի է ընդգծում սովորողի շահագրգռվածությունը, որպես դրական ու առաջադիմական երևույթի: Այսինքն՝ ուսանողը գիտակցում է, որ շրջապատում հաղորդակցվելիս, գրականությունից օգտվելիս ինքը լեզվի իմացության խնդրի առաջ է կանգնում, և մասնաճյուղում ուսումնառությունն ավելի պետք է նպաստեր օտար լեզվի իմացության մակարդակի բարելավմանը:




Մյուս կողմից, որոշակի վերլուծությունները պետք է պարզաբանեն, թե խնդիրը որքանով է կապված դասախոսների մանկավարժական ու մասնագիտական որակների, կամ էլ՝ այդ տարիներին սովորած ուսանողների մտավոր և ուսումնական որակների հետ:

գ) Բավարարվածությունը գիտելիքների գնահատումից

Բարոյահոգեբանական տեսանկյունից էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե ուսանողները որքանով են արդարացի ընկալում իրենց ջանքերի գնահատումը դասախոսների և կրթության կազմակերպիչների կողմից: Այստեղ ևս մասնաճյուղում, ըստ շրջանավարտների գնահատականի, «իշխում» է օբյեկտիվությունը:

h	Հարցի բովանդակությունը /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ.	Գ/Ա	ԳՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Մերվ	Տնտ	ՖրԼ
2.7	Որքանով են բուհում օբյեկտիվ գնահատվել Ձեր գիտելիքները	4,40	4,00	4,92	4,70	4,70	4,50	4,24	4,38	4,37	4,00
2.8	Որքանով է օբյեկտիվ ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքների պաշտպանություն)	4,46	4,29	4,93	4,82	4,50	4,13	4,10	4,28	4,58	4,11

Պետք է նշել, որ 2013-14 ուստարվանից ներդրված «Դասընթացների փաթեթները» որոշակի փոփոխություններ են գրանցել ուսանողների ձեռքբերումների գնահատման համակարգում,



մասնավորապես դասախոսների կողմից յուրաքանչյուր դասընթացի համար սահմանվել են գնահատման չափանիշներ, մեծ տեղ է հատկացվել ինքնուրույն աշխատանքների գնահատմանը, ուսանողները տեղեկացված են և գիտեն, թե ինչպես է գնահատվում նրանց յուրաքանչյուր ձեռքբերում, և ինչպես է ձևավորվում

վերջնական գնահատականը: Եվ դա իր արտահայտումն է գտել շրջանավարտների հարցման արդյունքներում, որը վերջին ուստարվա համար նախորդներից բարձր է և հուսադրող: Այն, ինչը խթանում է նոր որոնումները տվյալ ոլորտում:

2. Բավարարվածությունը մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից

Ժամանակակից բարձրագույն կրթության բաղադրիչ է համակարգչային սրահների և համացանցի մատչելիությունն ու կահավորանքը, ժամանակակից սարքավորումներով ուսումնական լաբորատորիաների հագեցվածությունն ու կահավորանքը.

h	Որքանով է բավարարված.	Միջ.գն.	Անգլ.	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	ՖրԼ
3.1	Լսարանների վիճակից և կահավորանքից	4,38	4,25	4,46	3,75	4,55	4,00	4,29	4,17	4,78	4,11
3.5	Ուսումնական լաբորատորիաների ժամանակակից սարքավորումներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից	4,26	4,00	4,58	4,18	4,63	4,00	4,00	4,18	4,72	4,00
3.2	Համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից	4,64	4,17	4,93	4,90	4,73	4,57	4,38	4,56	4,88	4,56
3.3	Մասնաճյուղի համացանցի (ինտերնետի) մատչելիությունից	4,48	4,17	4,79	4,90	4,64	4,00	4,10	4,65	4,81	4,44

Ինչպես տեսնում ենք, այս գնահատականներում ևս մասնաճյուղը «գոհունակությունների» հարթությունում է /4.26-4.64/: Այսինքն դրանք բարձր են և՛ շատ բարձր: Նման բարձր գնահատականները 5-բալանի սանդղակում հիմնված են մասնաճյուղի համակարգչային ռեսուրսների, լաբորատոր ժամանակակից սարքավորումների, դրանց մատչելիության և անխափան գործունեության փաստի վրա: Այն միաժամանակ սպասարկող անձնակազմի նվիրյալ և որակյալ աշխատանքի արդյունքն է:

Մյուս կողմից, ստացված տվյալների դիտարկումը որոշակի մասնագիտությունների կտրվածքով վկայում է, որ, շրջանավարտները միանման չեն ընկալում այն միջոցները, որոնք ընդհանուր օգտագործման են: Չեն բացառվում նաև գնահատականներում սուբյեկտիվիզմի տարրերը այն դեպքում, երբ, օրինակ, գնահատողների քանակը վիճակագրորեն մեծ չէ, կամ, ուրիշ հարցերում անձնական դժգոհությունը տեղափոխվում է տվյալ երևույթի գնահատման դաշտ, և կամ, օբյեկտիվ փաստ է՝ մասնաճյուղի ջանքերը տվյալ հարցում դրությունը շտկելու ուղղությամբ:

Դա կարող է լինել նաև «պատահականություն», մեկ հարցման փաստ: Այդ պատճառով հետագա անաչառ վերլուծությունը պետք է ցույց տա, թե առանձին մասնագիտությունների գծով լսարանների վիճակին տված համեմատաբար ցածր գնահատականները (3.75), կամ համացանցի մատչելիության հարցում՝ 4,17 գնահատականները որչափով են կապված ուսումնառության ռեսուրսների պակասի, օժանդակ ծառայությունների պատասխանատու գործունեության հետ: Միգուցե դա հարցման կազմակերպման մեջ եղած թերությունների, կամ բացթողումների արդյունք է: Հատկապես, որ համացանցի մատչելիության առումով գնահատականները ամենաբարձրերից են (միջինը՝ 4.64): Այն, ինչ օբյեկտիվորեն ավելի է համապատասխանում իրականությանը, քանզի մասնաճյուղն ունի 4 համակարգչային սրահ և ընթերցասրահ՝ անվճար ինտերնետ կապով, WiFi կապով անկյուններ, աշխատանքային հարմար ժամեր: Ասենք ավելին, տվյալները վկայում են, որ ընթացիկ տարվա հարցումներում տվյալ ոլորտում ամրագրվել է առաջընթացի միտում:

	<i>Հարց</i>	2011-12	2013-14	2015-16
3.1	Որքանով եք բավարարված լսարանների վիճակից և կահավորանքից	4,21	4,23	4,36
3.5	Որքանով եք բավարարված ուսումնական լաբորատորիաների ժամանակակից սարքավորումներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից	4,04	4,11	4,26
3.2	Որքանով եք բավարարված համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից	4,49	4,39	4,60
3.3	Որքանով եք բավարարված համացանցի մատչելիությունից	4,44	4,41	4,46

Ժամանակակից հայաստանյան բարձրագույն կրթության գլխավոր մտահոգություններից մեկը բուհ-աշխատաշուկա բարդ ու հակասական հարաբերություններն են, ապագա մասնագետներին աշխատանքի տեղավորելու խնդիրը: Խորհրդային իրականության մեջ այդ խնդիրները յուրովի լուծված էին, որի քաղաքական գնահատականը մեր շարադրանքի խնդիրը չէ: Փաստ է, որ բուհի շրջանավարտը գործնականում ապահովված էր մասնագիտական աշխատանքով: Ներկա սոցիալ-տնտեսական հարաբերությունները շրջանավարտին մասնագիտությամբ աշխատանքի ընդունվելու նախատեսված հնարավորություն չեն ընձեռում: Սույն հարցը տեղափոխվել է բուհ-աշխատաշուկա հարթություն և ավելի շատ իր իսկ՝ շրջանավարտի խնդիրն է: Սրան մեր հանրապետությունում ավելանում է այն անսովոր իրավիճակը, որը կապված է տնական շրջափակման, Արցախյան հիմնախնդրի, «ո՛չ խաղաղություն, ո՛չ պատերազմ» փխրուն ռազմաքաղաքական իրադրության ու անասելիորեն ծանր, անորոշ սուբյեկտիվ հոգեբարոյական վիճակի հետ: Ահա այս պայմաններում, ինչպես նաև կրթական համակարգի օբյեկտիվ զարգացումների համապատկերում հանրապետության բոլոր բարձրագույն կրթօջախներում, այդ թվում՝ ԵՊՀ ԻՄ-ում, ձևավորվել են շրջանավարտների և կարիերայի կենտրոններ, որոնց գործունեությունը կոչված է համակարգելու և լուծելու ապագա մասնագետներին աշխատանքի տեղավորելու խնդիրները: Սույն համատեքստում մեր հարցաշարում շրջանավարտներին խնդրել ենք գնահատել մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության արդյունավետությունը, նրանից բավարարվածությունը:

h	Որքանով եք բավարարված. /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ.	Գ/Ա	ԳՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Մերվ	Տես	ՖրԼ
3.4	Համալսարանի կարիերայի կենտրոնի աշխատանքի արդյունավետությունից	4,30	3,94	4,84	4,00	4,56	4,57	3,29	4,33	4,42	4,29


Ընդհանուր գնահատականների համապատկերում, ինչպես տեսնում ենք, գնահատականները համեմատաբար ավելի ցածր են: Բավական է նշել, որ 2015-16 ուստարվա հարցումներում, 9-ը մասնագիտություններից 3-ում ընդհանուր միջին գնահատականները 5-բալանի սանդղակով 4 և 4-ից ցածր են, իսկ «Պատմություն» մասնագիտությունում միջին գնահատականը կազմել է **3,29**: Թերևս կենտրոնի գործունեության արդյունավետության մասին ստացված տվյալներից միանշանակ հետևություն անել հնարավոր չէ: Այն բուհական կրթության մեջ համեմատաբար նոր կառույց է, իրենք՝ ուսանողները, ազատ են իրենց աշխատանքային հետագա ճակատագիրը տնօրինելու հարցում: Տարածաշրջանը, որտեղ գտնվում է մասնաճյուղը, էական յուրահատկություններ ունի թե՛ աշխատատեղերի, և թե՛ մասնագետների որակների գնահատման հարցերում: Մրանք գործոններ են, որոնք ճշգրտում են մտցնում տվյալ կառույցի գործունեության օբյեկտիվ գնահատման մեջ: Այդուհանդերձ, ընդհանուր ճշմարտությունն ու փաստն այն է, որ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը չունի ֆակուլտետային ստորաբաժանումներ, և մասնաճյուղի մի շարք՝ նշված մասնագիտությունների գծով շրջանավարտները կարծում են, որ տվյալ կառույցները կարող էին ավելի արդյունավետ քայլեր կատարել իրենց աշխատանքի տեղավորման հարցում: Մի ճշմարտություն, որը, կարծում ենք, պետք է դառնա տվյալ կառույցի ուշադրության առարկա: Հանուն արդարության նշենք, որ ուսանողների իրազեկվածությունը սույն հարցում, իրենց գնահատականների առումով, երկրորդական դեր չունի: Գնահատական, որը ունի նաև սուբյեկտիվ բաղադրամաս, այն է՝ ուսանողը չի հետաքրքրվում աշխատանքի տեղավորվելու իր խնդիրներով, և ակամա տվյալ հարցում «մեղավոր» է դառնում կառույցը: Բացառված չէ նաև այն հանգամանքը, թե կառույցը ինքը, այդքան էլ վատ չի աշխատել, սակայն այդ մասին ուսանողներին լիարժեքորեն իրազեկելու բավարար քայլեր չի կատարել: Ասվածը վերաբերում է նաև մյուս գործոններին:

Ներկայացնենք մասնաճյուղի գրադարանից և ընթերցասրահից շրջանավարտների բավարարվածության գնահատականները: Ընդհանուր առմամբ բավարար բարձր գնահատականների համապատկերում, որը պարբերաբար արձանագրում են մեր հարցումները, ուշադրության են արժանի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» ու «Պատմություն» մասնագիտությունների շրջանավարտների՝ 4,0-ից ցածր գնահատականները՝ գրադարանում և ընթերցասրահներում տրամադրած ժամանակակից մասնագիտական գրականությունից (համապատասխանաբար **3.11** և **3.71**):

h	Որքանով եք բավարարված. /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ.	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Մերվ	Տես	Ֆրլ.
3.6	Գրադարանում և ընթերցասրահներում տրամադրած ժամանակակից մասնագիտական գրականությունից	4,33	3,96	4,75	4,73	4,59	4,43	3,71	4,11	4,66	3,38
3.7	Գրադարանի և ընթերցասրահների վիճակից և կահավորանքից	4,53	4,35	4,81	4,82	4,73	3,88	4,05	4,39	4,88	4,00
3.8	Գրադարանի և ընթերցասրահների աշխատամեթոդներից և սպասարկումից	4,51	4,13	4,68	4,82	4,77	4,38	4,14	4,56	4,78	3,89

Կարծում ենք, որ սա առանձին ու լուծելի խնդիր է, ու, թերևս կապված է խիստ որոշակի պահանջների կամ ցանկությունների հետ: Կամ էլ վերոնշյալ ոչ լիարժեք իրազեկվածության

արդյունք է: Պարզաբանումը և ուսանողներին իրազեկումը դրական է անդրադառնալու ուսանողական միջավայրի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:




3. Բավարարվածությունը մասնաճյուղային միջավայրից

Մասնաճյուղային միջավայրից բավարարվածության վերաբերյալ ներկայացնենք մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի հանդեպ շրջանավարտների վերաբերմունքը, նրանց գործունեությունից բավարարվածության տվյալները.

h	Որքանով եք գոհ ԵՊՀ ԻՄ. /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ.	Գ/Ա	ԳՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տես	ՖրԼ
4.1.1	ղեկավարությունից	4,55	4,25	4,88	4,33	4,62	4,38	4,50	4,44	4,75	4,67
4.1.2	ֆակուլտետի ղեկավարությունից	4,70	4,50	4,89	5,00	4,77	4,43	4,47	4,67	4,78	4,67
4.1.3	պրոֆեսորադասախոսական կազմից	4,63	4,35	4,92	4,73	4,77	4,38	4,52	4,56	4,81	4,67

Ընդունված շեղման սահմաններում, ինչպես տեսնում ենք, գնահատականները նույն կարգի են՝ ամենաբարձրը: Սա վիճակագրական փաստ է և իրողություն, քանզի նույնիսկ անգեն աչքով, դիտման մակարդակով ակնհայտ է, որ գոյության երկուսուկես տասնամյակի ընթացքում կրթօջախը լիարժեքորեն կայացել ու հանրապետության բարձրագույն կրթական համակարգում իր կայուն տեղն է գրավել նախ և առաջ նվիրյալ ղեկավարների ու արհեստավարժ-հայրենասեր պրոֆեսորադասախոսական կազմի շնորհիվ: Բավական է մեկ շաբաթ հետևել մասնաճյուղում դասաժամերի ընթացքին, աշխատակազմի շարժին, առօրյա խնդիրների լուծման ընթացքին, ուսանողների ոչ շինծու տրամադրություններին, որպեսզի համոզվենք, որ պատերազմական



վիճակում գտնվող երկրի սահմանային մարզում գործում է միջազգային չափանիշներին բավարարող բարձրագույն կրթօջախ: Իրենք շրջանավարտները, որոնք գիտակցականության ու

իրազեկվածության օպտիմալ տարիքում են, հատկապես ներկա քաղաքացիական ազատությունների ու տեխնիկական զարգացվածության պայմաններում, հրաշալի

պատկերացնում են հանրապետության բարձրագույն կրթօջախների վիճակը, հնարավորություններն ու խնդիրները և միաժամանակ գիտեն, որ մասնաճյուղն իր բոլոր անհրաժեշտ որակներով չի զիջում որևէ բուհի, եթե ոչ՝ ավելին: 5-միավորանոց սանդղակով **4.55-4.70**, ինչպես նաև առավելագույն **5.0** ու նվազագույն **4.25** գնահատականները դրա խոստուն վկան են:

Հաջորդ աղյուսակում բերված են ուսանողական կառույցների (Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն) գործունեությանը շրջանավարտների տված գնահատականները.

h	Հարցի բովանդակությունը /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ.	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տես	ՖրԼ
4.1.4	Որքանով եք գոհ ուսանողական կառույցներից (ՈԻԽ, ՈԻԳԸ)	4,23	3,90	4,73	4,18	4,67	4,17	3,25	3,94	4,62	3,25

Տվյալները վկայում են, որ այստեղ որոշակի խնդիրներ կան: Բավական է նշել, որ 9-ը մասնագիտություններից 4-ում այդ գնահատականները 5-բալանի սանդղակում 4-ից ցածր են: «Պատմություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն լեզու» մասնագիտության շրջանավարտների գնահատականը նվազագույնն է՝ **3.25**: Մասնագիտորեն փաստը ուրիշ կերպ, քան որոշակի անբավարարություն չենք կարող որակել: Մասնաճյուղը հայտնի է ուսման, գիտության, մշակույթի ոլորտներում իր տաղանդավոր ուսանողներով, որոնք ամենատարբեր մակարդակի մրցույթներում երկու տասնամյակի ընթացքում բարձր են պահել կրթօջախի, մայր բուհի և հանրապետության պատիվը: Ուսանողական կառույցները սովորողների համար ամենասիրելի հաղորդակցման, սոցիալական ակտիվության դրսևորման միաջավայրն են: Եվ եթե նրանց գործունեությունը (որն անհնար է թերագնահատել, քանզի բոլոր հարցումներում պակաս չեն նաև 4-ից բարձր գնահատականները) շրջանավարտների վիճակագրորեն նշանակալից քանակին ոչ միշտ և ոչ բոլոր հարցերում են բավարարում, խոսում է այն մասին, որ մեր կրթօջախի գործունեության սույն ոլորտը կատարելագործվելու կարիք ունի: Քննարկումները, հետագա ուսումնասիրություններն ու տվյալների վերլուծությունը պետք է հուշեն օբյեկտիվ և սուբյեկտիվ այն գործոնների դաշտը, որը բարեփոխելով՝ հնարավոր է ավելի շատ բավարարել ուսանողների պահանջները: Թերևս նույն կամ հարակից ոլորտին է վերաբերում ուսանողների դիմումներին ու բողոքներին արձագանքելու ընթացակարգերին ու մեխանիզմներին տված գնահատականները.

h	Հարցի բովանդակությունը /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ.	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տես	ՖրԼ
4.2	Որքանով են արդյունավետ աշխատում ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերը և մեխանիզմները	4,37	3,90	4,88	4,36	4,62	4,17	3,78	4,18	4,57	4,44


Այստեղ ևս տեսնում ենք, որ ուսանողների ճնշող մեծամասնությունը տվյալ մեխանիզմներին տվել է բարձր և շատ բարձր գնահատական: Երկու մասնագիտությունների գծով **3.78** և **3.90** գնահատականները պահանջում են բացահայտում, թե դրանք արձագանքման որ մակարդակի պատճառով են: Իսկ ընդհանուր առմամբ հարցումը ամրագրում է վիճակագրական այն փաստը, թե մասնաճյուղում ուսանողների խնդիրներին արձագանքում են օբյեկտիվորեն և արդարացիորեն:

4. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը

Ներկայացնենք 2015-16 ուստարվա հարցման արդյունքները՝ մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ.

h	Հարցի բովանդակությունը /առկա, 2015-16 ուստարի/	Միջ. գնահ.	Անգլ	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվ	Տնտ	ՖրԼ
6.1	Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած Ձեր կրթությունը	4,39	4,13	4,78	4,33	4,55	4,43	4,24	4,47	4,35	4,11

Այն, ինչպես տեսնում ենք, բոլոր մասնագիտությունների համար 4-ից բարձր է, իսկ երեք մասնագիտությունների գծով՝ շատ բարձր: Տարբեր տարիների հարցումների ընդհանուր գնահատականների համադրումը վկայում է նաև, որ առկա է առաջընթացի միտում՝ 4,21՝ 2011-12 ուստարվա հարցման արդյունքում, և 4,39՝ 2015-16 ուստարում: Հետագա առաջընթացի ապահովման տեսանկյունից կարծում ենք, որ այստեղ կարևոր է կադրային ներուժի հզորացումը՝ հատկապես տեղացի կադրերի ներգրավման միջոցով: Սույն առումով հատկանշական է, որ շրջանավարտների՝ 3-ից մեկը պատրաստակամ է շարունակելու ուսումը, ինչը լուրջ մարդկային ռեսուրս է:



Ուրախալի է և նոր, տաղանդավոր դիմորդների առկայության հնարավորությունը (2015-16 ուստարվա հարցմանը մասնակցած 178 շրջանավարտներից 152-ը, այսինքն՝ **85,4%**-ը, իրենց մերձավորներին և ընկերներին պատրաստակամ են խորհուրդ տալու ուսանելու մասնաճյուղում).

Թիվ	ու.ստարի	Ընդ.	Անգլ	Կ/Ա	ԿՄՖ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Սերվիս	Տնտ	ՖրԼ
1	2011-12	89,7%	90,9%		92,3%	80,0%	94,4%	93,5%	84,0%	85,7%	84,0%
2	2013-14	86,1%	60,7%	93,5%	83,3%	95,0%	90,0%	82,4%	85,0%	93,8%	100,0%
3	2015-16	88,2%	83,3%	89,7%	83,3%	91,3%	87,5%	90,5%	88,9%	85,3%	100,0%

Ընդհանրացնելով ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների երեք հարցումների արդյունքները, որոնք անց են կացվել 2011-2016թթ., կարող ենք փաստել.

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում շրջանավարտների հասարակական գիտակցության մեջ ուսումնառության ընթացքում ձեռքբերված տեսագործնական գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները պատշաճ մակարդակի ու որակի են (միջին գնահատականը՝ **4.5**): Փաստ, որը խոսում է մասնաճյուղի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի արդյունավետ գործունեության մասին:

- Շրջանավարտները գոհ են նաև դասախոսների ու կրթության կազմակերպիչների կողմից իրենց ջանքերի գնահատման արդարացիությունից (**4.4**) և ուսման համար ստեղծված պայմաններից (ժամանակակից տեխնիկական հնարավորություններ՝ **4.60**, գրադարան-ընթերցարան՝ **4.5** և այլն):

- Ընդհանուր բարձր և շատ բարձր գնահատականների ֆոնին, առանձին դեպքերում կրթական որոշակի ռեսուրսներից (Ուսանողական կառույցների աշխատանք, մասնագիտական գրականության համալրվածություն) ուսանողները գնահատել են համեմատաբար ավելի ցածր:

Հավելենք, որ շրջանավարտները հարցաթերթի «Առաջարկություններ» բաժնում գրել են մի շարք ուշադրության արժանի առաջարկներ, մասնավորաբար. ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ավելի շատ ներգրավել; «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության շրջանավարտների դիպլոմում կամ որևէ այլ կերպ վավերացվի իրենց՝ անգլերենի իմացության հարցը; ավելի ճկուն դարձնել ուսանողների գնահատման համակարգը՝ օբյեկտիվությունը մեծացնելու նպատակով: Հարցեր, որոնք արդեն ղեկավարության ուշադրության կենտրոնում են և օբյեկտիվ հնարավորության ու նպատակահարմարության դեպքում ստանալու են պարտադիր լուծում:

Շրջանավարտները առաջարկներում բարձր են գնահատել ղեկավարության հոգատարությունը, պրոֆեսորադասախոսական կազմի պատշաճ մակարդակը, մասնաճյուղում ստացած իրենց որակյալ կրթությունը, այդ ամենի համար հայտնելով իրենց երախտագիտությունը:

Ասվածը թույլ է տալիս կատարել որոշակի առաջարկություններ: Մասնավորապես կարծում ենք, որ հարկավոր է.

-հարցման արդյունքները տեղադրել մասնաճյուղի կայքում և քննարկել յուրաքանչյուր ֆակուլտետում,

-այն ամբիոններում, որտեղ ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների գծով արտահայտվել են պակաս բավարարություն, դարձնել առանձին քննարկման ու վերլուծության առարկա, ինչը թույլ կտա հայտնաբերել վարչական ու բարոյահոգեբանական ռեսուրսներ՝ դրանց վերացման համար,

-ուսանող-շրջանավարտների կարծիքը հաշվի առնելու ցանկացած փաստ դարձնել մասնաճյուղում ընդհանուր իրազեկման նյութ. հանգամանք, որը դրական կանդրադառնա մասնաճյուղի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, ինչպես նաև կմեծացնի նման հարցումների՝ որպես բուհի կառավարման գործոնի արդյունավետությունը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին